ՀՅԴ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1910 Թ. ԿՈՊԵՆՀԱԳԵՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

ՀԱԿՈԲՅԱՆ Կ. Հ.

ՀՅ Դաշնակցությունը 1907 թ. օգոստոսին Շտուտգարդի միջազգային սոցիալիստական համաժողովում դարձավ Սոցինտերնի լիիրավ անդամ: Դրա շնորհիվ կուսակցությունն իր մշտական ներկայացուցիչն ունեցավ Միջազգային սոցիալիստական բյուրոյում՝ հանձին ՀՅԴ նշանավոր տեսաբան և միջազգային սոցիալիստական շարժման գործիչ Միքայել Վարանդյանի (Հովհաննիսյան)[1]:

Սակայն 1907 թ. Սոցինտերնին անդամագրվել էր միայն ՀՅԴ Ռուսական կայսրության տարածքում գործող հատվածը՝ ստանալով ընդամենը 1 վճռական և 2 խորհրդակցական ձայնի իրավունք: Ուստի, սկսած Շտուտգարդի համաժողովից՝ ՀՅԴ-ն Միջ.սոց.բյուրոյի առջև բարձրացրել էր նաև ՀՅԴ Օսմանյան կայսրությունում գործող հատվածին ձայնի իրավունք տալու խնդիրը[2], որն իր լուծումը գտավ արդեն 1908 թ. հոկտեմբերին՝ Միջ.սոց.բյուրոյի 10-րդ համագումարում: Հատկանշական է, որ Օսմանյան կայսրությունում գործող ՀՅԴ հատվածին նույնպես Սոցինտերնի մեջ ընդգրկելու՝ Մ. Վարանդյանի առաջարկը ընդունվեց միաձայն[3]:

Հաշվի առնելով Իրանում ծավալվող հեղափոխական իրադարձությունները և դրանցում ՀՅԴ կարևոր դերը՝ կուսակցության Արևմտյան բյուրոն ծրագրում էր վճռական ձայնի իրավունք ստանալ նաև ՀՅԴ Իրանի հատվածի համար: «Հարկավոր է մի զեկուցում Պարսկաստանի մասին և պահանջել մի ձայն այնտեղի համար»,-գրում էր ՀՅԴ առաջնորդ Ռոստոմը «Դրոշակի» խմբագրությանը Կոպենհագենի համաժողովից մի քանի ամիս առաջ[4]: Սակայն ՀՅԴ Իրանի հատվածին ևս ձայնի իրավունք տալու հարցը դրական լուծում չստացավ: Դրա պատճառների մասին տեղեկանում ենք ՀՅԴ գործիչներից Հայրիկի (Հ. Պանիրյան)՝ Մ. Վարանդյանին ուղղած 1912 թ. փետրվար 27-ի թվակիր նամակից.«Ցավում ենք, որ վերջին անցքերի պատճառով, ժամանակին կարելի չեղավ ուղարկել թե՛ պարսկական շարժումների պատմությունը և թե՛ տեղեկագրերը՝ մեր շրջանի սոց.գործունեության, Պարսկաստանի ճյուղն էլ ինտերնացիոնալում ընդունել և ճանաչել տալու համար»[5]:

---

[1] *Տե՛ս Դրոշակ, 1910, հուլիս-սեպտեմբեր, N 7-9, էջ 85, տե՛ս նաև, http// library.fes.de/zweiint/ w64.pdf:*

[2] *Տե՛ս* **Հակոբյան Կ.,** *ՀՅ Դաշնակցությունը և Սոցիալիստական ինտերնացիոնալը 1905-1907 թթ. (Հայոց պատմության հարցեր, 2009, N 10, էջ 195-196):*

[3] *Տե՛ս Դրոշակ, 1908, սեպտեմբեր-հոկտեմբեր, N. 9-10, էջ 151, տե՛ս նաև,* **Զավարյան Ս.,** *Երկեր, հ. Ա, Համազգայինի Վ. Սեթյան տպ, 1983, էջ 51-52:*

[4] **Ռոստոմ,** *Նամականի, Պեյրութ, 1999, էջ 500:*

[5] **Ամուրյան Ա.,** *ՀՅ Դաշնակցություն, Եփրեմ, Պարսկական սահմանադրություն, հ. Ա, Թեհրան, 1976, էջ 329-330:*

Նամակի բովանդակությունից պարզվում է, որ ՀՅԴ-ին բնորոշ՝ «կենդանի գործով» տարվելու իրողությունն էր պատճառ դարձել, որ ՀՅԴ Իրանի հատվածը չէր հասցրել կազմել անհրաժեշտ փաստաթղթեր՝ Սոցինտերնին անդամագրվելու և ձայնի իրավունք ստանալու համար: Այդուհանդերձ, ի տարբերություն 1907 թ. Շտուտգարդի համաժողովի, 1910 թ. Կոպենհագենում ՀՅԴ-ն ուներ արդեն 4 վճռական ձայն, որոնցից 2-ը կուսակցության ռուսաստանյան հատվածին էր տրված, 2-ը՝ թուրքականին:

Մինչ Կոպենհագենի համաժողովի սկսվելը Արևմտյան Բյուրոն պետք է կազմեր համաժողովին ուղղվող ՀՅԴ տեղեկագիրը, որտեղ հարկավոր էր հավուր պատշաճի ներկայացնել համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում ՀՅԴ իրականացրած գործունեությունը: Դա էր պատճառը, որ Ռոստոմը «Դրոշակի» խմբագրությանը գրած նամակում ակնհայտորեն սրտնեղում էր՝ «Անչափ բարկացել ենք ձեզ վրա, որ այդքան ուշ եք իմաց տվել Կոպենհակեն ուղարկելիք զեկուցման մասին: 1907-1910 թվականները ամենակարևոր շրջանն է մեր հեղափոխական կյանքում: Դա եզրափակումն է մեր 20-ամյա գործունեության: Անհրաժեշտ էր շատ լավ մշակված մի զեկուցում, ուր հստակ պարզված լինեին Դաշնակցության առանձնահատուկ կողմերը, նրա կատարած դերի կարևորությունը «Մոտավոր Արևելքում»…: Ռազմական մեր տակտիկի վրա չպիտի քաշվենք առանձնապես շեշտելու»[6]: Պատահական չէ, որ Ռոստոմը բացատրում էր, թե տեղեկագրում ինչը պետք է շեշտել, և խոստանում էր համապատասխան նյութերով օգնել այդ փաստաթուղթը կազմողներին: Օրինակ՝ Տարոնի շրջանի գործունեության մասին նա խորհուրդ էր տալիս նյութեր վերցնել Ռուբենից (Մ. Տեր-Մինասյան), իսկ կովկասյան գործունեության վերաբերյալ՝ պատրաստակամություն էր հայտնում ուղարկել 1909 թ. Վառնայի ընդհանուր ժողովին ներկայացված տեղեկագրերի պատճենները:

Միջ.սոց.բյուրոյի կողմից Կոպենհագենում ՀՅԴ-ից ակնկալվող տեղեկագրի կոնկրետ չափորոշիչների վերաբերյալ Միջ.սոց.բյուրոյի քարտուղար Ք. Հյուիսմանսը ժամանակին պարզաբանումներ էր արել «Դրոշակի» խմբագրությանն ուղղած իր նամակներում, որոնք պահպանվել են ՀՅԴ արխիվում[7]: «Ձեր տեղեկագիրը պետք չէ ծավալուն ըլլա: Չորս համառոտ ու հստակ էջեր բավարար են: Ժնև շատ դյուրավ կրնաք գերմաներեն և անգլերեն թարգմանիչներ գտնել»,- գրում էր Ք. Հյուիսմանսը 1910 թ. հունիսի 8-ին[8]: Սակայն ՀՅԴ տեղեկագիրը մասամբ միայն բավարարեց Ք. Հյուիսմանսի պահանջները: Այն ներկայացվեց անհրաժեշտ երեք լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն), սակայն գերազանցեց թույլատրված ծավալը՝ հասնելով մոտ 30 տպագիր էջի[9]:

Կարևորելով ՀՅԴ երեք հատվածների (Իրան, Թուրքիա, Ռուսաստան) գործունեությունը՝ տեղեկագրի մեջ, այնուամենայնիվ, շեշտը

---

[6] **Ռոստոմ,** *նշվ. աշխ., էջ 500:*

[7] *Տե՛ս Դրոշակ, 10.XII. 1986, N 17, էջ 23:*

[8] *Նույն տեղում:*

[9] *Նույն տեղում:*

դրվում էր Թուրքիայում կուսակցության իրականացրած քաղաքականության վրա՝ դրա արդյունքը համարելով սուլթան Աբդուլ Համիդի իշխանության տապալումը և նոր վարչակարգի ձևավորումը:

Սակայն, մինչ Թուրքիային վերաբերող հարցերին անցնելը, տեղեկագրում առանձին բաժնով անդրադարձ էր կատարվում նաև Իրանի և Կովկասի իրադարձություններում ՀՅԴ դերակատարությանը: Իրանի սահմանադրական շարժման մեջ ՀՅԴ-ն ներկայանում էր որպես առաջամարտիկ՝ հանձին Եփրեմ խանի, որ «հեղափոխական բանակին գլուխն անցած, կը շրջի մինչև ամենահեռավոր նահանգները և ամբողջ երկիրը հիացնող արիությամբ՝ կը ճզմե պարսկական հետադիմությունը - նոր վարչակարգին դեմ ապստամբած հեղաշրջական ցեղախմբերը»[10]:

Անդրադառնալով կուսակցության կովկասյան գործունեությանը՝ տեղեկագիրը մերկացնում էր հարևան ազգերին իրար դեմ գրգռելու ցարիզմի քաղաքականությունը՝ ի նկատի ունենալով հայ-թաթարական ընդհարումները և ՀՅԴ-ի դեմ նյութվող ու արդեն սկսված լիժինյան բռնությունների ալիքը: Ցարիզմի՝ Կովկասից մինչև Լեհաստան ու Ֆինլանդիա տարածված հետադիմական քաղաքականությունը դիմագրավելու համար ՀՅԴ տեղեկագիրը հրավիրում էր «ընկերվարական կուսակցությանց համակարգյալ գործակցության»[11]: Այս հարցը նախապես քննարկվել էր ՀՅԴ 5-րդ ընդհանուր ժողովում, որի եզրահանգումն էր. «1. որ պրոլետարական-գյուղացիական լայն զանգվածներու ընկերվարական գիտակցությունը, հրաշալի ու ահեղ ուժ մը ըլլալով հանդերձ, չի բավեր քանդելու բռնապետության ամուր համակարգը, 2. որ այդ գիտակցությունը իրեն դաշնակից պարտի ունենալ հեղափոխական կամ զինական պատրաստություն՝ սվիններու գրոհին դիմագրավելու համար»[12]:

Ցարական բռնատիրական վարչակարգից ազատվելու հիմնական միջոց համարելով հեղափոխական շարժման աշխուժացումը և շեշտը դնելով զինյալ պայքարի վրա՝ ՀՅԴ-ն փորձում էր Ռուսական կայսրության սոցիալ-դեմոկրատական կուսակցություններին հասկացնել, որ մասնակի կամ ընդհանուր գործադուլներով հնարավոր չէ հաջողությունների հասնել: ՀՅԴ տեղեկագիրը նման մարտավարությունը հիմնավորում էր երկու հետադիմական վարչակարգերի (սուլթանական Թուրքիա և շահական Իրան) ձախողման փաստով և այդ գործում ՀՅԴ մասնակցության փորձով: Ինչպես երևում է տեղեկագրի բովանդակությունից, դրա հեղինակները հետևել էին կուսակցության առաջնորդ Ռոստոմի հորդորներին և շեշտադրումները տեղափոխել էին ՀՅԴ ռազմաքաղաքական գործունեության վրա: 1908 թ. հուլիսյան պետական հեղաշրջման առնչությամբ տեղեկագիրն անդրադառնում էր Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ժողովրդական ընդվզումներին (Էրզրում, Դիարբեքիր, Բիթ-լիս), երիտթուրքերի հետ համագործակցության հարցերին. «Հայ և

[10] *Նույն տեղում, էջ 25:*
[11] *Նույն տեղում, էջ 26:*
[12] *Նույն տեղում:*

թուրք կազմակերպությունները ճոխ ու այլազան գործունեություն մը զարգացուցին: Հոդվածներով ու թռուցիկներով՝ անոնք թուրք, քյուրտ ու հայ կը հրավիրեին համաձայնության, միացյալ գործունեության՝ բռնատիրության դեմ: Կը տարածեին արտասահմանեն ստացված թուրքերեն, հայերեն, արաբերեն ու քրտերեն գաղտնի գրականություն: Ընկերվարության միջազգայնական գաղափարներով թափանցված՝ զորակցաբար՝ անոնք խոսքով ու գործով կը պաշտպանեին աշխատավոր ժողովուրդի շահերը…»[13]: Ներկայացնելով 1908 թ. հուլիսյան իրադարձությունների ամբողջ ընթացքը՝ տեղեկագիրը մերկացնում էր «սահմանադրական» Թուրքիայի նոր ղեկավարների՝ երիտթուրքերի սոցիալ-տնտեսական, հողային, ազգային քաղաքականությունը: «Ընկերվարական քարոզչություն» խորագիրը կրող բաժնում ներկայացնելով այն պայմանները, որոնք խոչընդոտում են սոցիալիստական գաղափարների տարածմանը, տեղեկագիրը արձանագրում էր. «…այսօր լեգեոն մըն ենք մենք, որ այս անհուն անապատին մեջ կը պարզենք աշխատանքի ու համաշխարհային ընկերվարության դրոշը, անոր հենարան տալով մեր կենդանի խոսքը և մեր գործը»[14]:

ՀՅԴ-ի խոսքի ու գործի արդյունքներն իրենց ուշացնել չտվին: Նրա ծրագրի ընկերվարական մոտեցումների քարոզչությունը սկսեց ընդգրկել հասարակական ավելի լայն շրջանակներ: Առաջ էր տարվում հողերի համայնացման գաղափարը, որը կամաց-կամաց նպաստավոր արձագանք էր գտնում Արևմտյան Հայաստանի բնակչության մեջ: ՀՅԴ երեսփոխանները արհմիությունների վերաբերյալ քննարկումների ժամանակ պաշտպանում էին արհմիությունները, հանդես գալիս՝ աշխատավորների շահերի պաշտպանությամբ:

Դատելով Կոպենհագենի կոնգրեսին ներկայացված տեղեկագրից՝ ՀՅԴ-ն կարևորում էր արհմիությունների և գյուղացիական միությունների դերը, և պատահական չէ, որ Թուրքիայի տարբեր քաղաքներում կազմակերպությունը, բացի քաղաքային կամ մարտական խմբերից, ուներ նաև արհմիություններ ու գյուղացիական միություններ, որոնք նույնպես կուսակցության կառույցի բաղկացուցիչ մասն էին: «Գյուղացիական միություններուն մեջ, ինչպես և համագործակցականներուն և արհմիություններուն, մեր քարոզիչները կը ձգտին արթնցնել աշխատավորության դասակարգային գիտակցությունը և զայն պատրաստել ապագա պայքարներու համար: Անոր կուսուցանեն, անմիջական շահերե և առօրյա կարիքներու բավարարումեն անդին, տեսնել և հասկնալ ազատագրական պայքարներու գերագույն իդեալը՝ ընկերվարությունը»[15]:

ՀՅԴ տեղեկագրի մեջ կուսակցության «ռազմական մարտավարությունը» կարևորելու Ռոստոմի պահանջի ընդհանուր հունի մեջ էր Նիկոլ Դումանի մասնակցությունը Կոպենհագենի համաժողովին: Նրա ներկայությունը և անմիջական ելույթը կարող էին լինել

[13] *Նույն տեղում, 24.XII.1986, N 18, էջ 24:*
[14] *Նույն տեղում, էջ 27:*
[15] *Նույն տեղում, էջ 30:*

խոսուն ապացույց վերոհիշյալ մարտավարության փաստարկման համար: Իրեն Կոպենհագենի համաժողով կանչելու փաստը զարմացրել է Նիկոլ Դումանին: «Նիկոլը,- գրում է Ռ.Դարբինյանը,- կը վրդովվեր հաճախ եւ միաժամանակ կը խնդար ըսելով. Զարմանալի մարդ է էս մեր Միքայելը: Ես ուր, սոցիալիստական ժողովը ուր: Երևի ուզում է ինձ սոցիալիստ դարձնել»[16]:

ՀՅԴ պատվիրակության մյուս երեք անդամներն էին Մարտիրոս Հարությունյանը (Շիրակունի)[17], որը Նիկոլ Դումանի հետ ներկայացնում էր ՀՅԴ Ռուսաստանյան կայսրության հատվածը, իսկ Օսմանյան կայսրության տարածքում գործող ՀՅԴ կառույցը ներկայացնում էին Արմենակ Բարսեղյանը և Միքայել Վարանդյանը[18]:

Կոպենհագենում հրավիրված 8-րդ միջազգային սոցիալիստական համաժողովի աշխատանքները տևեցին 1910 թ. օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 3-ը: Համաժողովին առաջին անգամ մասնակցության հայտ էր ներկայացրել Սալոնիկի միջազգային աշխատավորական կազմակերպությունը: Միջ.սոց.բյուրոն, նախքան համաժողովը, այս կազմակերպությանը Սոցինտերնի մեջ ընդգրկելու վերաբերյալ լուրջ վերապահումներ ուներ: Այդ պատճառով Միջ.սոց.բյուրոյի անունից Ք. Հյուիսմանսը նամակ էր հղել ՀՅԴ-ին՝ խնդրելով կարծիք տալ այդ կազմակերպության մասին: «Սիրելի քաղաքացիներ,- գրում էր Ք. Հյուիսմանսը 1909 թ. հուլիս 2-ին «Դրոշակի» խմբագրությանը,- Քանի մը օր առաջ ստացանք նամակ մը՝ Սալոնիկի «Բանվորներու միութենեն», որ կը փափաքի տեղ գըրավել Միջազգայնականի օսմանյան հատվածին մեջ: ...ձեզմե պիտի խնդրենք մեզի գրել ձեր կարծիքը՝ ա) Այս ընկերակցության ուժին և տևելու կարելիության մասին, բ) Զայն քաղաքական օրգանիզմի մը վերածելու կարելիության մասին, գ) Այս խմբավորումի անդամակցության անհրաժեշտության ու նպատակահարմարության մասին»[19]:

ՀՅԴ-ի միջնորդությամբ Սալոնիկի միջազգային աշխատավորական կազմակերպությունն ընդգրկվեց Սոցինտերնի մեջ, սակայն մի վերապահումով. նա չէր կարող համաժողով ուղարկել սեփական պատգամավորություն և այդ պատճառով իրենց ներկայացնելու լիազորությունը տվել էր բուլղար սոցիալիստներին[20]:

Համաժողովի բացման արարողությունը կատարվեց մեծ շուքով: Դանիայի սոցիալիստները կազմակերպեցին 120.000-150.000-անոց աշխատավորական շքերթ, որի վերջնակետում նախատեսվում էին ականավոր սոցիալիստների ելույթները (Ժ. Ժորես, Է. Վանդերվել-

---

[16] **Դարբինյան Ռ.,** *Երկեր, հ. Ա, Համազգայինի Վ. Սեթյան տպ, 1972, էջ 153:*

[17] *Անդամ է եղել «Կովկասյան նախագիծը» պատրաստող ՀՅԴ խորհրդի, 1919 թ. ընտրվել է Հայաստանի խորհրդարանի պատգամավոր, 1938 թ. գնդակահարվել բոլշևիկների ձեռքով (տե՛ս Հուշամատյան ՀՅ Դաշնակցության, Հարյուրամյակ, Ալբոմ-ատլաս, հ. Բ, Կալիֆորնիա, 2001, էջ 146):*

[18] *Տե՛ս* **Վարանդյան Մ.,** *Միջազգային ընկերվարական համագումարը [Հայրենիք (ամս.), Բոստոն, 1923, N 10, էջ 97], տե՛ս նաև Դրոշակ, 1910 հուլիս-սեպտեմբեր, N 7-9, էջ 83:*

[19] *Դրոշակ, 26.XI.1986 , N 16, էջ 11:*

[20] *Նույն տեղում, 1910 հուլիս-սեպտեմբեր, N 7-9, էջ 83:*

դե, Կ. Կաուցկի, Մակդոնալդ, Վան-Կոլ և այլք): Նրանց թվում էր նաև Մ. Վարանդյանը, որը պատիվ ունեցավ նման բարձր ամբիոնից ելույթ ունենալու և արծարծելու արևմտահայության առջև ծառացած հիմնախնդիրները: Իր խոսքը հիմնականում կառուցելով ՀՅԴ տեղեկագրի հիման վրա՝ Մ. Վարանդյանը անթաքույց ակնարկեց երիտթուրքական ռեժիմի ազգայնամոլության մասին. «Այո, անշուշտ, օսմանյան հեղափոխությունը տվել է հանրային իշխանության ղեկը տիրող «նվաճող» ազգության ներկայացուցիչներին, որոնք լինելով հանդերձ փոքրամասնություն երկրի մեջ, ձգտում են – նման մաջառ շովեններին և ավստրիական գերմանացիներին – բռնադրել իրենց հեգեմոնիային, գերիշխանությանը մյուս «նվաճված» ազգությունները – հայեր, հույներ, բուլղարներ, արաբներ և այլն – որոնց դիտում են իբրև սոսկ կրոնական համայնքներ...»[21]: Մ. Վարանդյանը շեշտում էր նաև ՀՅԴ-ի կողմից աշխատավոր ժողովրդի ուղղորդումը դեպի սոցիալիզմի ազատարար իդեալը: Նա զարգացրեց այն միտքը, որ Թուրքիայում, Իրանում և Կովկասում «մենք պիտի ձգտենք – ներշնչված մեր ավստրիացի ընկերների օրինակից – հիմնել մեր փոքրիկ ինտերնացիոնալը, մեկը անհամար կորիզներից տիեզերական մեծ Ինտերնացիոնալի»[22]:

Հաջորդ օրը սկսվեցին համաժողովի կանոնավոր աշխատանք- ները: Նախ՝ խոսեցին Դանիայի սոցիալիստական շարժման առաջնորդները, ապա բացման խոսք ասաց Միջ.սոց.բյուրոյի նախագահ Է. Վանդերվելդեն և ներկայացրեց կոնգրեսների միջև ընկած ժա- մանակահատվածում (1907 թ. Շտուտգարտ – 1910 թ. Կոպենհագեն) սոցիալիստական աշխարհում տեղի ունեցած փոփոխությունները և մատնանշեց սոցիալիստական շարժման ձեռքբերումները: Այնուհետև համաժողովի քննությանը ներկայացվեցին օրակարգային կետերը. 1. կոոպերատիվների (գործակցական ընկերություններ) և քաղաքական կուսակցությունների հարաբերությունները, 2. գործազրկության խնդիրը, 3. իրավարար ատյաններ և զինաթափություն, 4. աշ- խատավորական ապահովության օրենքների միջազգային արդյունքները, 5. ինչպե՞ս կազմակերպել միջազգային ցույց՝ մահվան պատժի դեմ, 6. ինչպե՞ս իրագործել, ըստ կարելիության շուտ՝ միջազգային կոնգրեսների որոշումները, 7. ինչպե՞ս կազմակերպել միջազգային համերաշխությունը, 8. մի շարք հռչակագրերի քննություն: Վերջին կետի մեջ մտնում էին՝ ա. արհեստակցական միությունների հարցը Ավստրիայում, բ. ՀՅԴ առաջադրած բանաձևը՝ Թուրքիայում և Իրանում Ռուսաստանի վարած քաղաքականության վերաբերյալ, գ. բանաձև-բողոքը Ֆինլանդիայի վերաբերյալ: Այս ենթակետերի նյութերը բաշխվեցին ընտրված 5 հանձնաժողովներին՝ ուսումնասիրության համար[23]:

ՀՅԴ առաջադրած բանաձևը քննարկվեց 5-րդ հանձնաժողովում և մի փոքր բարեփոխումից հետո ընդունվեց միաձայն: Բավական

[21] *Նույն տեղում, էջ 84:*
[22] *Նույն տեղում:*
[23] *Նույն տեղում, էջ 85-86:*

մանրամասն ներկայացնելով Թուրքիայում և Իրանում «հակահեղափոխականության փոթորիկը հարուցանելու» ռուսական քաղաքականությունը[24], բանաձևում արվում էր հետևյալ եզրակացությունը. «…Որ ցարիզմը, լինելով հաղթական՝ իր ազատասպան արշավանքում սեփական պետության մեջ և խորապես ատելով սահմանադրական կարգուսարքը իր սահմանների վրա, ձգտում է սիստեմատիկաբար, համառությամբ՝ վերականգնելու բռնակալ ռեժիմը Պարսկաստանում և Թյուրքիայում: Հանդեպ այդ ծանր իրողությունների, որ կազմում են մշտնջենական վտանգ Արևելքի երկու երիտասարդ ռամկավարությունների համար՝ Կոպենհագենի Համագումարը կոչ է անում Եվրոպայի սոցիալիստական կուսակցություններին, օգտվելու իրենց տրամադրության ներքո գտնված բոլոր միջոցներից՝ ցարիզմի այդ հետադեմ շահատակություններին վերջ դնելու նպատակով»[25]:

Այս բանաձևը հարուցեց ռուս սոցիալ-դեմոկրատների զայրույթը: Նրանք առարկում էին, որ բանաձևում նշված չէ այն հալածանքների մասին, որ կրել են իրենք՝ Իրանում և Ռուսական կայսրությունում: Նրանք սոցիալիստ-հեղափոխական պատգամավոր Ավկսենտիևի միջոցով ՀՅԴ ներկայացուցչին փոխանցեցին, որ իրենք տրվյալ հարցը բարձրաձայնելու են համաժողովի համագումար նիստում: Սակայն ի վերջո սահմանափակվեցին հարցը միայն հանձնաժողովում արծարծելով:

Թուրքիայի վերաբերյալ համաժողովին ուղղված բանաձև էր փոխանցել Սալոնիկի միջազգային աշխատավորական կազմակերպությունը՝ բուլղար սոցիալիստների միջոցով[26]: Այս բանաձևը վիճաբանության տեղիք տվեց: Համաժողովի պատգամավորներն առաջարկեցին մի շարք բարեփոխումներ: Թուրքիայի և բալկանյան պատգամավորության կողմից խոսեցին Մ. Վարանդյանը և Ռակովսկին: Մ. Վարանդյանը խոսեց 1908 թ. հուլիսյան իրադարձություններից հետո Թուրքիայում առկա մի շարք իրողությունների մասին: Նա վկայակոչեց երկրում տեղի ունեցող գործադուլ-ները, արհմիությունների փակման պատճառով սկիզբ առած խմորումները, խորհրդարանական բանավեճը՝ սոցիալական հարցերի շուրջ, Սալոնիկի միջազգային աշխատավորական կազմակերպության բազմահազարանոց միտինգը, ապա բնորոշեց սոցիալիստական շարժման մասին սեփական բանաձևը. «Պրոլետարական շարժումը՝ եվրոպական Թիւրքիայում և գյուղացիականը՝ Հայաստանում»[27]: Իսկ Ռակովսկին խիստ քննադատեց երիտթուրքերի կողմից աշխատավորական շարժման նկատմամբ տարվող քաղաքականությանը: Նրա ելույթից հե-տո բանաձևն ընդունվեց մի քանի փոքր շտկումներով: Դրանով ավարտվեց 8-րդ միջազգային սոցիալիստական համաժողովը և որոշվեց, որ հաջորդ համաժողովը պետք է տեղի ունենա 1913 թ. Վիեննայում:

---

[24] *Նույն տեղում, էջ 88:*

[25] *Նույն տեղում:*

[26] *Նույն տեղում:*

[27] *Նույն տեղում, էջ 89:*

Պետք է նշել, որ Սոցինտերնի անդամ դառնալուց հետո Կոպենհագենում ՀՅԴ ներկայացուցչի ունեցած ելույթը առաջին պաշտոնական խոսքն էր՝ համաժողովում հավաքված սոցիալիստական մեծ ընտանիքին: Դա շահեկան առաջընթաց էր նախորդ համաժողովների համեմատ, որոնցում հայության հիմնախնդիրները հիմնականում շոշափվում էին այս կամ այն սոցիալիստ պատգամավորի միջոցով: Շտուտգարտի համաժողովից հետո ՀՅԴ – Միջ.սոց.բյուրո հարաբերությունները տեղափոխվել էին որակապես այլ մակարդակ: Ակնհայտ էր, որ Օսմանյան կայսրությունում Սոցինտերնին հետաքրքրող հարցերում ՀՅԴ կարծիքն արդեն ծանրակշիռ էր, ինչը դրսևորվեց Կոպենհագենի համաժողովում՝ Թուրքիային վերաբերող հարցերի քննարկման և բանաձևերի ընդունման ժամանակ:

Կոպենհագենի համաժողովին Ռուսական կայսրությունում պայքարի մարտավարության հետ կապված ՀՅԴ հնչեցրած առաջարկը անարձագանք չմնաց: Համաժողովի փակումից անմիջապես հետո Դանիայի մայրաքաղաքում, Ռուսական կայսրության մի շարք սոցիալիստական կուսակցությունների մասնակցությամբ գումարվեց միջկուսակցական, ոչ պաշտոնական խորհրդաժողով: Այս առիթով «Դրոշակը» գրում էր. «Դա մասամբ մի տեսակ պատասխան-արձագանք էր Հ.Յ.Դաշնակցության վերջին (Վառնայի) Համագումարի ընդունած որոշումին ու կոչին»[28]: Միջկուսակցական խորհրդաժողովի նպատակն էր ծանոթանալ Ռուսաստանի տարբեր երկրամասերում տիրող կացությանը, կուսակցությունների կազմակերպվածության աստիճանին, վերսկսել մինչև ռուսական առաջին հեղափոխությունը տեղի ունեցած կոնֆերանսները և խորհրդաժողովները, որոնք ընդհատվել էին ռեակցիայի տարիներին: Այսպիսով, Ռուսական կայսրությունում գործող կուսակցությունների միջկուսակցական խորհրդաժողովը Կոպենհագենի համաժողովի շարունակությունն էր: Խորհրդաժողովին ներկա էին ռուս սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության (Նատանսոն, Վոլխովսկոյ, Չերնով, Ակսենտիև, Արարատսկի, Ռուբանովիչ, Բունակով, Նիկոլան և այլք), Լեհական սոցիալիստական կուսակցության (Բ. Լիմանովսկի և Վրոնսկի) Լատիշական սոցիալ-դեմոկրատական միության, Հրեական «Սերպի» և ՀՅԴ-ի (Նիկոլ Դուման, Մ. Հարությունյան, Մ. Վարանդյան) ներկայացուցիչները:

Խորհրդաժողովում ՀՅԴ-ի կողմից բացման խոսքով հանդես եկավ Մ. Վարանդյանը: Նա հայտարարեց, որ ՀՅԴ 5-րդ ընդհանուր ժողովը «…միաձայն բաղձանք է հայտնել, որ Ռուսաստանի այլևայլ սոցիալիստական ու հեղափոխական հատվածները միանան ընդհանուր գործողության մեջ, ընդհանուր բռնապետական թշնամու դեմ, և միաձայն նաև որոշել է, որ կազմակերպության պատշաճ մարմինները դիմումներ անեն այդ նպատակով»[29]: Մ. Վարանդյանը հիմնա-վորեց այդ որոշման անհրաժեշտությունը և արդիականությունը:

---

[28] *Նույն տեղում, էջ 90, տե՛ս նաև 1909, հոկտեմբեր-նոյեմբեր, N 10-11, էջ 130, 132-133:*

[29] *Նույն տեղում:*

Կոնկրետացնելով նման «ընդհանուր գործակցության» պարագայում անհրաժեշտ մարտավարությունը՝ ՀՅԴ-ն գտնում էր, որ հարկավոր է իրականացնել «հեղափոխական, մարտական ուժերի որոշ համերաշխ գործակցություն, կոորդինացիա»[30]: Այդ առաջարկությունը բխում էր ՀՅԴ 5-րդ ընդհանուր ժողովի որոշումներից և, բացի այդ, ՀՅԴ-ի համար դա փորձված և արդարացված մարտավարություն էր: Մ. Վարանդյանի ելույթը դրական արձագանք գտավ խորհրդաժողովի մասնակիցների մեջ, և նրանք պահանջեցին նիստը ղեկավարող Վ. Չերնովից, որպեսզի խորհրդաժողովին մասնակցող կուսակցությունների ներկայացուցիչները զեկույցներ ներկայացնեն իրենց կազմակերպական վիճակի և գործելավայրի մասին՝ առանձնապես շեշտը դնելով մարտական խնդիրների վրա: Ելույթ ունեցան Լեհական սոցիալիստական կուսակցության, սոցիալիստ-հեղափոխականների, ՀՅԴ-ի ներկայացուցիչները:

ՀՅԴ գործունեության մասին խորհրդաժողովին զեկուցեց Մարտիրոս Հարությունյանը, որն անդրադարձավ կուսակցության իրականացրած ծրագրային փոփոխություններին և դրանց հետևանքներին: Խորհրդաժողովի մասնակիցներին հետաքրքրեցին Կովկասում ցարական վարչակազմի դեմ ՀՅԴ տարած պայքարը, հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ինքնապաշտպանական մարտերի կազմակերպման մարտավարության ձևերն ու եղանակները, ՀՅԴ մարտական ներուժը: Այդ մասին նրանց տեղեկացրեց և բոլոր հարցերին պատասխանեց Նիկոլ Դումանը, որն, անդրադառնալով կուսակցության մարտական ներուժին, նշեց. «Դաշնակցության ռազմական կուսակցությունը Կովկասում, բարեբախտաբար, չի ջախջախվել, քանի որ կառավարությունը չի կարողացել այն բացահայտել: Կառավարությանը հայտնի էին միայն զինվորական առաջնորդներից մի քանիսը, որոնք ժամանակին կարողացան տեղափոխվել արտասահման: Այսպիսով, Դաշնակցությունը Կովկասում այժմ ունի ոչ թե գեներալներ առանց բանակի, այլ հակառակը, բանակ՝ առանց գեներալների»[31]: Նիկոլ Դումանը ուշադրություն դարձրեց այն փաստին, որ «Դաշնակցությունը» սկզբից ի վեր – Թյուրքիայում, Կովկասում, Պարսկաստանում – եղել է նախ և առաջ յեղափոխական-ինքնապաշտպանական կազմակերպություն. նա կռվել է տարբերական ազատությունների համար, նա եղել է միաժամանակ ամենահզոր պատնեշը Կովկասի մեջ՝ հակահեղափոխական հորձանքների դեմ»[32]:

Նիկոլ Դումանի ելույթը մեծ հետաքրքրություն առաջացրեց խորհրդաժողովի մասնակիցների մեջ, առանձնապես՝ զինված ապըստամբության, քաղաքային պայմաններում փողոցային կռիվներ մղելու հարցերի հետ կապված: Այս կապակցությամբ Նիկոլ Դումանը հետագայում նշում էր. «Մեր Միքայելն էլ շատ պնդեց.., որ մի

[30] *Նույն տեղում:*
[31] **Գևորգյան Հ.,** *Նիկոլ Դուման, Ե., 2002, էջ 357:*
[32] *Դրոշակ, 1910, հուլիս-սեպտեմբեր, N 7-9, էջ 94:*

բրոշյուրի չափ բան գրեմ այդ նյութի մասին»[33]: Նիկոլ Դումանի այդ գրքույկը հետագայում տպագրվեց հայերեն ու ռուսերեն լեզուներով և դարձավ մի յուրահատուկ ուղեցույց՝ Ռուսական կայսրության հեղափոխական կուսակցությունների համար[34]: Մի շարք այլ ելույթներից հետո ընդունվեց որոշում, որ սոցիալիստ-հեղափոխականները, Լեհական սոցիալիստական կուսակցությունը և ՀՅԴ-ն մոտ ապագայում կհրավիրեն խորհրդաժողով՝ Ռուսական կայսրության մեջ գործող սոցիալիստական ուժերի մասնակցությամբ, որպեսզի սահմանեն «համերաշխ գործակցություն ապագայ քաղաքական ձեռնարկների համար»[35]:

Այսպիսով, Կոպենհագենի միջազգային սոցիալիստական համաժողովին հաջորդած՝ Ռուսաստանի սոցիալիստական մի շարք ազդեցիկ կուսակցությունների խորհրդաժողովը թույլ տվեց կատարել ուժերի, գործելաոաշտերի և իրավիճակի սթափ գնահատում, քննարկել ցարիզմի դեմ պայքարում արդյունավետ մարտավարություն որդեգրելու հարցերը:

УЧАСТИЕ АРФД В КОПЕНГАГЕНСКОМ МЕЖДУНАРОДНОМ СОЦИАЛИСТИЧЕСКОМ КОНГРЕССЕ 1910 Г.

АКОПЯН К. Г.

Резюме

Получив членство в Социалистическом интернационале, АРФ Дашнакцутюн стала полноправным членом Международного социалистического бюро, где имела своего постоянного представителя в лице Микаела Варандяна.Последний вместе с тремя представителями АРФ Дашнакцутюн принимал участие в Копенгагенском конгрессе 1910 г. В своем выступлении М. Варандян представил участникам конгресса деятельность партии в Турции, Иране и Российской империи, отметив при этом роль АРФ Дашнакцутюн в свержении деспотического режима в Турции и Иране. А тактика борьбы с царизмом была обсуждена на неофициальном межпартийном конгрессе, с участием нескольких революционных партий Российской империи (АРФ Дашнакцутюн, социалистов-революционеров, Польской социалистической партии и др.).

[33] **Դարբինյան Ռ.,** *նշվ. աշխ., էջ 154:*
[34] *Նույն տեղում, էջ 154:*
[35] *Դրոշակ, 1910, հուլիս-սեպտեմբեր, N 7-9, էջ 94:*